

ՀԸԶՊԱԼԼԱՆ ԱՊԱԶԻՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ

Լիբանանի կառավարությունը նախանցեալ օր գումարեց քանի մը ժամ երկարած կարեւոր նիստ մը, որուն աւարտին հրապարակեց Իսրայէլի հետ զինադադարի եւ Զըզպալլայի ապագինումին վերաբերող ամերիկեան փաստաթուղթին գլխաւոր կէտերը վաւերացնելու յանդուգն որոշում մը, թէւ Զըզպալլային եւ Ամալին հետ առնչուած հինգ նախարարները քաշուեցան Պաալտայի մէջ գումարուած նիստէն՝ յայտնելով իրենց վերապահութիւնը։ Զանապետութեան նախագահութիւնը հաղորդագրութեամբ մը յտակացուց, որ նախարարաց



խորհուրդը վաւերացուցած է զինադադարը ամրապնդելու նպատակները, որոնք կը ներառեն հետեւեալ գլխաւոր կէտերը. 1) Թայէֆի գործադրութիւն, կառավարութեան հեղինակութեան ամրապնդում Լիբանանի ամբողջ տարածքին, որպէսզի պետական հաստատութիւնները ունենան զէնք կրելու մենաշնորհ, 2) զինադադարի համաձայնութեան երկարաձգուած գործադրութիւն՝ ներառեալ ցամաքային, օդային եւ ծովային բոլոր ունեցութիւններու դադրեցում, յանգելու համար վերջնական եւ ամբողջական լուծումի, 3) զինեալ բոլոր կազմակերպութիւններու ապագինում՝ ներառեալ Զըզպալլան, 4) լիբանանեան բանակէն յանձնառու տեղակայում սահմանային եւ այլ շրջաններու մէջ, 5) իսրայէլեան ուժերը նահանջ սահմանային բռնագրաւեալ հինգ կէտերէն, ապա սահմանագծումի եւ գերիններու հարցերու լուծում՝ դիւանագիտական միջոցներով, 6) տեղահանուած քաղաքացիներու վերադարձ իրենց քաղաքներն ու սահմանային գիւղերը, 7) երաշխաւորում, որ իսրայէլեան ուժերը պիտի դադրեցնեն իրենց բոլոր գործողութիւնները՝ ներառեալ սահմանային խախտումները, 8) սահմանագծումի ամբողջացում Լիբանանի եւ Իսրայէլի միջեւ, 9) սահմանագծում Լիբանանի եւ Սուրիոյ միջեւ, 10) տնտեսական համագումարի կազմակերպում, մասնակցութեամբ գլխաւոր պետութիւններուն եւ Լիբանանի բարեկամներուն՝ աջակցելու համար Լիբանանի տնտեսութեան եւ վերականգնումին, որպէսզի Լիբանան վերստին դառնայ բարգաւաճ երկիր մը։

Վարչապետ Նաուաֆ Սալամ իր կարգին յայտնեց, որ կառավարութիւնը վաւերացուցած է ամերիկեան փաստաթուղթին առաջին հատուածին մէջ ներառուած զինադադարի ամրապնդումին նպատակները, որոնք փոխանցուած էին պատուիրակ Թոմ Պարրաքէն։

ԹԵՐ ԵՒ ԴԵՍ ԿԵՑՈՒԱԾՔՆԵՐ

Զըզպալլա կառավարութեան որոշումը քննադատեց նոյնիսկ կառավարութեան նիստին ընթացքին։ Զըզպալլայի հետեւորդներ հաւաքուեցան զանազան շրջաններու մէջ եւ

քննադատեցին կառավարութեան որոշումը, երկրին բարձրաստիճան ղեկավարները համարելով Իսրայէլի գործակալներ։ Աշխատանքի նախարար Մոհամմատ Զայտար պնդեց, որ իրենք զէնքի մասին պիտի չխօսին նախքան իսրայէլեան նահանջը լիբանանեան հողերէն եւ ունեցութիւններուն դադրեցումը։

«Հաւատարմութիւն դիմադրութեան» խորհրդարանական խմբակցութիւնը բողոքեց, որ կառավարութիւնը անտրամաբանականօրէն աճապարած էր իր որոշումին մէջ, իսկ վարչապետը խախտած էր Լիբանանի համախոհականութիւնը՝ վաւերացնելով ամերիկեան պահանջները։ Երեսփոխան Իհաս Զամատ յայտնեց, թէ որոշումը գրուած է իսրայէլեան գրիչով, ամերիկեան թուղթի վրայ, «այդպէս ալ պիտի մնայ՝ թանաք թուղթի վրայ»։ Երեսփոխան Ռատ Պըրրօ իր կարգին զուշացուց, թէ կառավարութեան որոշումը կ'առաջնորդէ մարդոց հետ բախումի։ Իսկ երեսփոխան Ալի Մոքտատ զուշացուց «կրակով խաղալու վտանգէն»։

Շուտով տուր յայտարարութիւններով հանդէս եկան նաեւ շիի կրօնական գործիչներ։ Շիիներու գերագոյն խորհուրդի փոխնախագահ շէյխ Ալի խաթիպ հանրապետութեան նախագահին կոչ ուղղեց գումարելու ազգային երկխօսութեան նիստ մը՝ լուծելու համար այս խնդիրը։

Արտաքին գործերու նախարար Եուսէֆ Ռեժժի յայտնեց, թէ ինք կը նախընտրէ «զենքներու յանձնում» եզրը, ոչ թէ «զէնքի մենաշնորհի վերականգնում»։

Լիբանանեան ուժերու երեսփոխաններէն Ղասսան Զասպանի յայտնեց, որ բանակին նկատմամբ Զըզպալլայի որեւէ ժխտական շարժում կուսակցութիւնը պիտի մեկուսացնէ բոլոր լիբանանցիներէն։ Երեսփոխան Իհաս Մաթար յայտնեց, թէ նախագահին ու վարչապետին վրայ դրուած գրաւը ճիշդ էր, ակնկալելով յանձնառու որոշումներ։ Լիբանանեան ուժեր կուսակցութեան նախագահ Սամիր ժաաժաա շէշտեց, թէ կառավարութեան որոշումին հրապարակումէն ետք զինեալ որեւէ կազմակերպութիւն կը համարուի ապօրինի։ Երեսփոխան Սամիր ժաալէ Զըզպալլային կոչ ուղղեց կառավարութեան որոշումին վերաբերեալ իր կեցուածքը ճշդելու համագործակցական մթնոլորտի մէջ։



Միջազգային մեկնաբանութիւններուն մէջ, Ծոցի արաբական երկիրներու համագործակցութեան կազմակերպութիւնը ողջունեց կառավարութեան որոշումը եւ զօրակցութիւն յայտնեց Լիբանանի գերիշխանութեան, ապահովութեան ու կայունութեան։

ԹՐԱՄՓԻ ՈՒՂԻՆ

ԼՈՒԾՈՒՄ ՊԻՏԻ ԸԼԼԱ՞Յ

Որպէս գործադրութիւն հակամարտութիւնները լուծելու եւ անոնց փոխարէն տնտեսական աշխուժութիւնը քաջալերելու իր խոստումին, Միացեալ Նահանգներու նախագահ Տոնըլտ Թրամփ երէկ Պէյրութի ժամանակացոյցով ուշ գիշերին Սպիտակ տան մէջ հիւրընկալեց Զայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեանն ու Ատրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւը։



Նախ տեղի ունեցան Թրամփի երկկողմանի ժողովները Փաշինեանի եւ Ալիեւի հետ համապատասխանաբար։ Թրամփ ապա հիւրընկալեց եռակողմանի հանդիպումը։ Սպիտակ տան մամլոյ քարտուղար Աննա Քէլիի համաձայն, Երեւանի եւ Պաքուի համաձայնութեամբ Ուաշինկթըն պիտի ստանայ տարածաշրջանային տարանցիկ ճանապարհի մը գործարկելու

բացառիկ իրաւունքը։ «Միջանցքը Թրամփի անունով պիտի կոչուի «Թրամփի միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճումի ուղի» (TRIPP Trump Route for International Peace and Prosperity) եւ երկու երկիրներուն համար պիտի ապահովէ անխափան հաղորդակցութիւն, միաժամանակ յարգելով Զայաստանը, անոր գերիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնն ու ժողովուրդը», ըսաւ Քէլի։ Կ'ենթադրուի, որ ամերիկացիները այդ շրջանին մէջ յատուկ ընկերութեան միջոցաւ պիտի կառուցեն երկաթուղի, քարիւղատար եւ կազատար խողովակաշար, մանրաթելային կապի գիծ եւ ելեկտրահաղորդումի գիծեր։

Թրամփ յիշեցուց, որ «այս երկու երկիրները տարիներ շարունակ պատերազմի մէջ եղած են, որուն հետեւանքով զոհուած են հազարաւոր մարդիկ», աւելցնելով որ Միացեալ Նահանգներ երկկողմանի համաձայնագրեր պիտի ստորագրէ երկու երկիրներուն հետ՝ տնտեսական հնարաւորութիւնները համատեղ օգտագործելու համար, որպէսզի կարելի ըլլայ բացայայտեց տարածաշրջանին ամբողջ ներուժը։ «Ես հպարտ եմ այս խիզախ առաջնորդներով, որ ճիշդ կը վարուին ի շահ Զայաստանի, Ատրպէյճանի, Միացեալ Նահանգներու եւ ամբողջ աշխարհին», գրեց ամերիկացի նախագահը, շէշտելով որ շատեր փորձած են վերջ տալ հայ-ատրպէյճանական հակամարտութեան, սակայն միայն ինք յաջողած է այդ ընել։ Ան նշեց, որ իր վարչակարգը երկար ժամանակ կապի մէջ էր երկու կողմերուն հետ, ապահովելու համար համաձայնութիւնը։

Շարունակութիւնը տեսնել էջ 2

50 ՄԻԼԻՈՆ՝ ՄԱՏՈՒՐՕՆ ԶԵՐԲԱԿԱԼՈՂԻՆ

Միացեալ Նահանգներու արտաքին գործերու եւ արդարադատութեան նախարարութիւնները պատրաստակամութիւն յայտնեցին 50 միլիոն տոլար յատկացնելու անոր՝ որ ծերեակալութեան կամ դատապարտումի առաջնորդող տեղեկութիւններ կը փոխանցէ Վենեզուելայի նախագահ Նիքոլաս Մատուրոյին մասին՝ թմրանիւթերու վաճառականութեան հարցով ամերիկեան օրէնքները խախտելու ամբաստանութեամբ։ Ըստ ամերիկեան կողմին, Մատուրօ նախապէս կը ղեկավարէր Ուաշինկթընի կողմէ ահաբեկչական համարուած եւ թմրանիւթերու վաճառականութեամբ զբաղող Cartel de los Soles աւազակախումբը։

Ս.Դ.Հ.Կ.-Ը ԵՒ ՊԵՅՐՈՒԹԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՍ ՅՈՎԻԿ ՊԶԱՔՃԵԱՆԸ Ի ՍՊԱՍ ՀԱՃԸՆԻ ԵՒ ԽԱԼԻԼ ՊԱՏԱՌԻԻ ԲԱՐԳԱԻԱՃՄԱՆ

Ս.Դ.Հ.Կ. «Ժիրայր Մուրատ» եւ «Աղասի» մասնաճիւղերու վարչութիւններուն նախաձեռնութեամբ եւ Պէյրութի Քաղաքապետական խորհուրդի անդամ Յովիկ Պչաքճեանի անմիջական հովանաւորութեամբ, նախաձեռնութիւնները կը վերածուին պտղաբեր եւ շօշափելի իրականութեան։

Այս համատեղ ջանքերը կը միտին շրջանի կեանքը բարելաւելու, թաղամասերուն մէջ նոր աւիշ ու աշխուժութիւն ներմուծելու։

Աշխատանքները կեդրոնացած են Նոր Զաճըն եւ Խալիլ Պատաուի թաղամասերուն մէջ, որոնք Պէյրութի հայահոծ եւ աշխոյժ շրջաններն են։



Կը կատարուին փողոցներու նորոգման աշխատանքներ, ինչպէս նաեւ լուսաւորութեան եւ ջրամատակարարման բարելաւումներ։

Նախաձեռնողները կը շէշտեն, որ թաղամասերու բարգաւաճումը նպաստ կը բերէ յարաբերական ապահովութեան եւ բնակիչներու հանգիստին։

Այս համատեղ ջանքերը կը վկայեն շրջանի պատասխանատուներուն, ինչպէս նաեւ վերջին ընտրութիւններուն Քաղաքապետական խորհուրդին անդամ դարձած Բենկա-ժուին խոստումներու իրագործման մասին ի նպաստ քաղաքացիներու բարօրութեան։

ԽԱՊՐԻԿՆԵՐ ԹԱԻՐԻԶԷՆ




Թաւրիզի հետ իմ ժամադրութիւնը բնաւ չի յապաղիր։ Ոչ միայն ընկալեալ օրը, այլեւ ժամն անգամ չ'արժանագրեր դոյզն խանգարում։ Ու ես, բացուող ամէն ամսուան առաջին օրուան առաջին ժամերուն, ելեկտրոնային իմ մամակատուփին մէջ անպայման կը գտնեմ Թաւրիզէն յղուած «Արտազ» ամսաթերթին նորագոյն թիւը։

«Արտազ»՝ ճշդապահութեան անմոռելի պիտոյեան մը...։ Կը ներբեռնեմ զայն անհամբեր, յետոյ կը սկսիմ մի առ մի դարձնել անոր էջերը՝ թէ՛ դիտելով գունաւոր լուսանկարները, թէ՛ յամենալով հոն տողանցող դէմքերուն վրայ (որոնք յաճախ անուճակաւունով ծանօթ դարձեր են ինծի...), թէ՛ ալ հանդարտօրէն ընթերցելով հրամցուած հիւրերը՝ անձանձոյթ հաճոյքով։

Այս այսպէս է՝ տարիներ ի վեր։ Զիմա «Արտազ» 20 տարեկան է արդէն։ Թերթին խմբագիրն ու հրատարակիչը՝ **Գրիգոր արք. Զիֆթեանն** է, որ միաժամանակ Ատրպատականի Զայոց թեմի սիրեցեալ առաջնորդն է։ Այնքան նուիրումով հոն իրականելի ջանասիրութեամբ փարած է առ մամուլի իր այս աշխատանքին, որ կարելի չէ չգմայլի։ Ամբողջ թերթը, ծայրէ-ծայր, Թաւրիզ եւ Պարսկահայք կը բուրէ...։ Եւ այս անխախտ սկզբունքը, իմ կարծիքով, տեղական այս միակ թերթին գլխաւոր արժանիքն է։ Եթէ չըլլար «Արտազ»-ը՝ մենք պիտի կարենայինք խապրիկներ ստանալ Թաւրիզէն, Ուրմիայէն եւ շրջակայ քանի մը գիւղաւաններէ, ուր, որքան ալ նօսրացած ըլլան, դեռ կը գոյատեւեն հայ հաւաքականութիւններ։ դեռ ազգային-եկեղեցական կեանքը կը շնչէ հոն իր աւանդական ջերմութեամբ, դեռ հայոց լեզուն ու խօսքը կը բարբառին...։

(Շարունակութիւնը տեսնել էջ 2)

« Մ Ն Ա Յ Ե Ա Լ Ը Դ Լ Ռ ՈՒԹ Ի Ն »



Շատ անգամ լռութիւնը կ'ընկալուի որպէս բացակայութիւն, բայց այն կրնայ հնչողութիւն ունենալ, ներկայութիւն եւ իմաստ, որոնք դուրս են խօսքի սահմաններէն: Այս խոհագրութիւնը ծնունդ առաւ կեանքի դիտարկումներէն, երաժշտութեան հանդէպ ունեցած սերէն, գրականութեան ներշնչանքէն եւ զիս մղեց պատկերել լռութեան անտեսանելի իրողութիւնները:

Որպէս վերնագիր ընտրուած շէքսպիրեան այս տողը՝ «Մնացեալը՝ լռութիւն», գրութեանս առանցքն է եւ կը յիշեցնէ, թէ երբ խօսքը դադրի, սկիզբ կ'առնէ լռութեան խօսուն ճամբան:

Կեանքիս ընթացքին կուտակած փորձառութեամբ հասած եմ այն եզրակացութեան, որ լռութիւնը ոչ թէ վիճակ, այլ բարդ ու բազմաշերտ երեւոյթ է եւ միշտ չէ որ հանգստութիւն կը ներշնչէ: Խօսիլ-չխօսիլ-լռել՝ մարդկային գոյութեան տարբեր ծելեր են, որոնցմէ իւրաքանչիւրը իր տարբերակները ունի, իր շեշտադրումները:

Կայ անտարբերութեան լռութիւն, սքսի լռութիւն, կայ գիտակցուած ու արգասաւոր լռութիւն, որ ունակ է նոր միտքեր յառաջ բերելու: Կայ զգօն լռութիւն, կայ ուրիշին խօսքը լսելու լռութիւն, դժգոհ եւ աղմկոտ լռութիւն, շփոթուած լռութիւն, նաեւ այլոց հետ մերդաշն համաձայնութիւն յուշող լռութիւն, ինչպէս նաեւ լռութիւն, որ կապ կը հաստատէ տիեզերքի անսահմանութեան հետ:

Տեսնենք, թէ ինչ կ'ըստ այս մասին Շոփենհաուզը. «Կանոն «Կենսական ոյժերու» մասին թրաքթաթ մը ունի, բայց ես պիտի ուզէի ողբերգութիւն գրել այդ մասին, քանի որ ատոնց անհամաչափ օգտագործումը ամբողջ կենանքս վերածած է ամէնօրեայ տանջանքի: Անշուշտ կան մարդիկ, նոյնիսկ շատեր, որոնք պիտի ժպտին, քանի որ անոնք աղմուկի հանդէպ զգայուն չեն: Սակայն այդպիսիք է, որ զգայուն չեն վիճաբանութեան, միտքի, քերթողութեան կամ արուեստի, մէկ

խօսքով՝ որեւէ տեսակի մտաւոր տպաւորութեան հանդէպ: Այդ փաստը կարելի է վերագրել անոնց ուղեղի հիւստածքին կոպիտ եւ ամուր կառուցումածքին»:

Երանի անոնց, որոնք ընդունակ են լսել եւ ըմբռնելն գիշերային լռութիւնը:

Լռութիւնը ոչ թէ խօսքի կասեցում է, այլ նոր շեշտաւորումով անոր առաւել արժեւորումը: Լռութիւնը յղի է ստեղծագործական լիցքով: Թերեւս անելի քիչ քան լեզուն, բայց մասնակիցն է մարդու կերպաւորման գործընթացին:

Լռութիւնը, անկասկած, էական մասն է մարդու կառուցածքին:

Այս մասին լսենք Սիւզըն Սոնթակին ծայրը. «Լռութիւնը, անխուսափելիորէն, խօսքի ձեւ է: Ինչպէս որ չի կրնար ըլլալ «վեր» առանց «վարի», այնպէս ալ լռութիւնը չի կրնար ճանչցուիլ առանց ծայն ու լեզուով լեցուն միջավայրի»:

Օրերը կ'անցնին օրացոյցէն փրցուած թերթիկներու պէս, եւ ամէն օր նոր բան մը տեսնելու, նոր բան մը լսելու առիթներ ունինք: Յընթացս կը փորձենք լռութիւն գտնել-ստեղծել, բայց հազուադէպ կը յաջողինք:

Եթէ կեդրոնմանք, ամէն լաւ խօսքի տակ անելի լաւ ու անելի բովանդակային լռութիւն մը կը գտնենք, որ խորունկ է... յաւերժութեան չափ:

Նուրբ զգացողութիւններէն մինչեւ գեղեցիկի ընկալում, հաճոյքէն ու ցաւէն մինչեւ սէր ու մահ՝ բոլոր այն հիմնարար երեւոյթները, որոնք մարդկային հոգիին բուն էութիւնը կը կազմեն, կրնան խորապէս զգացուի՛լ, բայց արտայայտուի՞լ՝ հազիւ թէ... Մնացեալը միշտ լռութիւն է:

Յաճախ մտածած եմ արուեստներու մասին եւ տարիներ առաջ ծեւաւորուած տեսակէտս չի փոխուիր: Արուեստներէն կատարելագոյնը երաժշտութիւնն է: Եւ ինչո՞ւ... Որովհետեւ միայն երաժշտութիւնն է, որ ընդունակ է արտայայտելու... անարտայայտելին:

Լռութիւնը հնարաւորութիւն է: Ինչպէս խօսքը, այն ալ գոյաբանական հիմք ունի: Ջրոյցի ընթացքին լուռ մնացող անձ մը շատ բան կրնայ ըսել դիմացիինը, բաղդատմամբ ուրիշի մը, որ չի տառապիր բառերու պակասէն: Որեւէ նիւթի շուրջ երկար խօսիլ կարենալը երաշխիք մը չէ, որ այդպիսով հասկացողութիւն կը զարգանայ: Բայց չմոռնա՞նք, որ լռելն ալ համր ըլլալ չէ: Եիշդ ատենին եւ ճիշդ տեղիի լռել գիտնալը անձին գիտակցակա՞մ իսկարպակը կ'ըմպօ՞ծ:

Երբեմն լռութիւնը գիջու՞մ կ'ենթադրէ... Ջիջու՞մ ոյժի մը դիմաց, որ վեր է մեր վերահսկումէն: Այդ գիջու՞մը կրնայ ծնիլ

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (Երեւան)

մղուած յարգանքէ, թերեւս ալ երկիւղածութենէ: Մենք լռութեամբ կ'ընդունինք մէկու մը գոյութիւնը, որ արժանի է մեր յարգանքին ու ակնածանքին:

Հայերէն «լուռ» բառին աճառեանական բացատրութենէ կը հասկնանք, որ լռութիւնը կը կապուի ընդհատուած գործողութեան գաղափարին հետ: Կը սկսի նահանջէն, հրաժարումէն, սեփական կամքն ու պատկերացումը պարտադրելու փորձէն: Բայց ատիկա չի նշանակեր անշարժանալ: Լռել չի նշանակեր չմասնակցիլ: Աճառեան կ'ըսէ՝ «Ամիսօս, լռած, սուս... քնիկ հայ բառ. կը նշանակէր նախ՝ լսող, միտ դնող, ակամջ դնող, հլու... եւ կը պատկանի «լու», «լուր» արմատին»:

Կա՞յ արդեօք մտածելու ընդունակ մարդ, որ արտայայտուած չըլլայ լռութեան արժէքին մասին:

Հնդկաստանի քաղաքական եւ հոգեւոր առաջնորդ Մահաթմա Կանտի գրած է.

«Լռութեան մէջ հոգին անելի յստակ լոյսի տակ կը գտնէ իր ուղին, եւ այն, ինչ անորսալի ու խաբուսիկ էր, կը վերածուի բիւրեղեայ մաքրութեան: Մեր կեանքը ճշմարտութեան երկար ու դժուարին որոնումն է»:

Իսկ Շէքսպիր՝ Դանիոյ արքայազնին շուրթերով կը հնչեցնէ այս անմոռանալի տողերը.

Մեռնում եմ, Հորացիօ, զօրաւոր թոյնը յաղթում է ոգուս, Այնքան չեմ ապրի, որ Անգլիայի լուրերը լսեմ, Բայց զուշակում եմ, որ ընտրութիւնը վիճակուելու է Քաջ Ֆորթինարասին: Նրան եմ տալիս մահամերձ ծայնս. Դատմիր այս նրան, այն դէպքերի հետ, անէ կամ պակաս, Որ պատճառ դարձան... **Մնացեալը՝ լռութիւն:**

Այսպէս, «Համլէթ»-ին մէջ մենք ականատես կ'ըլլանք տեսանելի ողբերգութեան, որ կը ծաւալի հանդիսատեսի աչքին առջեւ, սակայն զուգահեռաբար կ'ընթանայ ներքին ուրիշ տրամ մը՝ անելի խորունկ, որ տեղի կ'ունենայ լռութեան մէջ:

Լռութիւնը կը նմանի ուսերու վրայ նետուած մխիթարական շալի: Ես ծանօթ եմ նաեւ այն լռութեան, որ կը ծաւալի երկու հոգիի միջեւ, երբ խօսքերը անելորդ են:

Կայ նաեւ լռութիւն, որ դատարկութիւն կը յիշեցնէ. Այդ տեսակը դաժան է: Հոն կարելի չէ շնչել:

Լռութիւնը նաեւ ամէն բանի բացակայութիւնն է... Բայց միեւնոյնն է, մարդը անոր խորքերուն մէջ ինքզինք կ'որոնէ... Մնացեալը՝ լռութիւն...:

ԽԱՊՐԻԿՆԵՐ ԹԱԻՐԻԶԷՆ

(Շարունակուած էջ 1-էն)

Թաւրիզը մեր իրանահայ երեք թեմերէն մին է՝ Թեհրանի ու Ապահանի հետ միատեղ:

Երեքին մէջ, թուական տեսակէտէ, ամէնէն մօտը Թաւրիզն է հուսկանքար, սակայն անկիա ունի պատմական շատ հարուստ անցեալ եւ ժառանգութիւն: Թեմին տարածքին մէջ է Ս. Թաղէի նշանաւոր վանքը, որուն տարեկան ուխտագնացութիւնները, վերջին տասնամեակներուն, սկսած են գրաւել համաշխարհային ուշադրութիւն: Թեմական նոյն տարածքին մէջ են նաեւ հնադարեան Ծործորի մատուռը եւ Ջուլֆայի Ս. Ստեփանոս Նախավկայի վանքը: Ու տակաւին, այս թեմին յատկանիշերէն մին ալ այն է, որ ան սահմանակից է Հայաստանի Հանրապետութեան: Դրացի՝ Սիւնիքի մարզի: Դուք անգամ մը թղթատեցէ Զիֆթեան սրբազանի «**Ուղեւորութիւն Ատրպատականի հայոց թեմում**» խորագրեալ երեք ծաւալուն հատորները (2017-2024), որպէսզի արձանքէ զարմանք երթաք, տեսնելով թէ Ատրպատականի տարածքին (Իրանի հիւսիսային նահանգը) ի՞նչ հայաբնակ գիւղեր կան աւաններ եղեր են անցեալին եւ թէ որքա՞ն շատ, - 200-է անելի,-- մատուռներ, աղօթատեղիներ կառուցուել են այնտեղ, դարեր առաջ...: Աւերակ, երբեմն կիսափուլ, երբեմն լքեալ են այդ հայկական կառոյցները այսօր, բայց չեն դադրիր պատմութիւն ուսուցանելէ, պատմութեան շունչը բերելէ...: Զիֆթեան սրբազան, իր թանկարժէք գիրքերով, փրկած է զանոնք իսպառ մոռացումէ:

«**Արտազ**» առաւելաբար տեղեկատու թերթ է: Ընթերցողը հոն կը գտնէ արժագանգը ազգային ու համայնքային այն բոլոր իրադարձութիւններուն, որոնք կ'արձանագրուին Ատրպատականի թեմէն ներս:

Խմբագիր սրբազանը միշտ առաջնորդող գրութեամբ մը կը բանայ անսաթերթին իւրաքանչիւր թիւը: Կը մատնանշէ երեւոյթ մը ու սեղմ տողերով իր մտորումները կը կիսէ ընթերցողներուն հետ:

«**Արտազ**»-ի նորագոյն թիւը յուլիսեան համարն է: Ջայն ստացայ օրեր առաջ: Նկատել առած իրանախորայէեան վերջին «մենամարտ»-ը, այն յոռետես մտածումն ունեցեր էի՝ թէ թաւրիզեան անսաթերթին Յուլիսի համարը լոյս չի տեսներ...: Սխալեւ եմ: Թերթը ոչ միայն լոյս ընծայուել է, այլեւ ինչ-ինչ խապրիկներ բերել է մեզի Թաւրիզի հայոց առօրեայէն...:

Քաղուածաբար կ'ամփոփեմ ամսագրին լրատուութիւնները, զաղափար մը տալու համար այդ հեռաւոր ու ինքնիր մէջ կծկուած գաղութին աւանդապահ ու տոհմիկ դիմագծութեան մասին: Եւ Թաւրիզի բուռ մը հայութիւնը կը մնանցնեն մեծ ընտանիքի մը, որ, հակառակ գիճք շրջապատող կաշկանդիչ պայմաններուն, կ'ապրի հայօրէն, կառչած կը մնայ իր ինքնութեան:

Ուրեմն՝

- Վարդավառի առիթով (27 Յուլիս), Զիֆթեան սրբազան պատարագեր ու քարոզեր է Թաւրիզի Մարալան թաղամասի Ս. Աստուածածին ուխտավայր-մատուռին մէջ: Եկեղեցական արարողութեանց աւարտին ճաշի սպասարկութիւն կատարուել է տեղւոյն ազգային կալուածի այգիին մէջ, տիկնանց խմամակալ մարմնին կողմէ: Նոյն առթիւ, Ուրմիոյ Ս. Ստեփանոս եկեղեցւոյ մէջ պատարագ մատուցել է տեղւոյն հովիւը՝ Մարտիրոս քինյ. Դուկասեան:

- 23 Յուլիսին առաջնորդ սրբազանը, ընկերակցութեամբ թեմական խորհուրդի ներկայացուցիչներու, հանդիպում մը

ունեցեր է Չալտրան նահանգի կուսակալին հետ՝ Ս. Թաղէի տարեկան ուխտագնացութեան առնչաբար (ի դէպ, այդ ամենամեայ աւանդական ուխտագնացութիւնը այս տարի կատարուեցաւ արդէն 29 Յուլիս-2 Օգոստոս): Կուսակալը ազնուօրէն կարգադրել է, որ ամէն դիւրութիւն եւ ապահովութիւն ընծայուի հայ ուխտաւորներուն: Առաջնորդարանը, իր կարգին, ժողովի հրաւիրել է համայնքային մարմինները ու կազմեր յատուկ յանձնախումբ մը՝ ուխտագնացութեան վերաբերեալ պարտն ու պատշաճը դասաւորելու նպատակով:

- 18 Յուլիսին բացումը կատարուել է Ազգ. առաջնորդարանի վերանորոգեալ շքամուտքին ու երկաթեայ մայր դարպասին, Յակոբեան բարերար ընտանիքին աջակցութեամբ: Այս առթիւ, երախտագիտութեամբ յիշատակուել է բարերար զաւակաց ողբացեալ հայրը՝ Եմիլ Յակոբեանը, որ ազգային որոշադրիչ դեր ու երկարամեայ ծառայութիւն ունեցեր է Թաւրիզի մէջ, մօտիկ անցեալին: Նոյն օրը, բացուած յայտարարուել է նաեւ առաջնորդարանի շրջափակի ընտանեկան այգին, որ թաւրիզահայութեան համար ամառնային մէկտեղումի հաճելի վայր մըն է աւանդաբար: Այգիին մատակարարումն ու հսկողութիւնը այս տարի ստանձնել է Հայ համալսարանականներու միութիւնը:

- Թաւրիզի Հայ համալսարանականներու միութիւնը իր կեդրոնատեղիին մէջ բացել է նկարչութեան եւ գեղարուեստի դասընթացք մը, ուր իբրեւ դասատու հրաւիրուել է նկարչուի Փոլետ Բենոյեան: Շաբաթը անգամ մը՝ տասնեակ երեխաներ կը մարզուին հոս գծազարկան արուեստի մէջ:

- Ուրմիոյ մէջ ալ շարժումներ կան: ՀՕՄ-ի տեղւոյն մասնաճիւղը 20 Յուլիսին իր անդամուհիները հաւաքել է նախաճաշի սեղանի մը շուրջ՝ դուրս բերելու համար զանոնք երկիրը պատուհասող պատերազմական վերջին ծանր մթնոլորտէն:

Դարձեալ Ուրմիոյ մէջ, Հայ մարզամշակութային Արարատ կազմակերպութեան (ՀՄԱԿ) սկսուտական թելը պատանիներու ուսուցողական հաւաք մը սարքել է 3 Յուլիսին: Նոյն ծիրով, 17 Յուլիսին ալ միօրեայ արշաւ մը կատարուել է մօտակայ Ռահւա հայկական երբեմնի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին: ՀՄԱԿ-ի Ուրմիոյ մասնաճիւղը արդէն 71 տարեկան է եղեր:

Մշակութային լուրեր չկան այս ամիս: Եղանակը ամառնային է ու տօթը՝ կիզիչ: Պէտք է սպասել սեպտեմբերեան վերամուտին, որպէսզի դարոցները բացուին եւ մշակութային կեանքը փթթի վերստին Թաւրիզի երկնակամարին տակ...:

Մինչ այդ, թեմին մէջ անպակաս են շինարարական աշխատանքները: Մօտ ու հեռու հայաթափուած գիւղերու մէջ այնքան շատ մատուռներ ու կիսաւեր աղօթատեղիներ կան որ քիչ-քիչ պէտք է հասնիլ բոլորին: «**Արտազ**» կը հաղորդէ, որ անցեալ ամիս որոշ նորոգութիւններ կատարուել են Ս. Թաղէի մօտիկ երբեմնի Վանք գիւղի մատանալ շուրջ, երկաթեայ դռներով օժտուել է Մահլաւ գիւղի հայկական Ս. Խաչ եկեղեցին, սիւներով ամրացուել է Ս. Թաղէի վանքին ներքնամասը...: Ընթացքի մէջ են եղեր, նաեւ, Թաւրիզի առաջնորդարանի «Մելիք-Թանգեան» թանգարանի վերաբացման համար տարուող աշխատանքները:

Թաւրիզը միշտ խապրիկներ ունի: Եւ ես կը խոստանամ առիթը չփախցնել՝ արժագանգելու Ատրպատականի մեկուսի այդ շրջանէն հասնող ոգեւորիչ խապրիկներուն...

ԹՐԱՄՓԻ ՈՒՂԻՆ ԼՌԻԾՈՒՄ ՊԻՏԻ ԸԼԼԱ՞Յ

Շարունակուած էջ 1-էն

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ուաշինկերնեան տեսակցութենէն առաջ համացանցային գրառումներու մէջ գրեց. «Երանի՜ խաղաղարարներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիներ պիտի կոչուին: Մատթ. 5.9»: Իսկ վարչապետի բանբեր Նազելի Պաղտասարեան շեշտեց, որ իրականութեան չեն համապատասխաներ բոլոր այն պնդումները, թէ Հայաստան համաձայնած է կամ կրնայ համաձայնիլ «միջանցքային» լուծումներու: Նշենք, որ Փաշինեանին հետ Միացեալ Նահանգներ մեկնած պաշտօնատարներուն շարքին էին Անվտանգութեան խորհուրդի նախագահ Արմէն Գրիգորեանը, արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը եւ բարձր արհեստագիտութիւններու արդիւնաբերութեան նախարար Մխիթար Հայրապետեանը:

Հայաստանի Ազգային ժողովի փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան համացանցի ընկերային հարթակներուն վրայ անդրադարձաւ վարչապետ Փաշինեանի Ուաշինկերն այցելութեան եւ փաստաթուղթերու ստորագրութեան: Ան վստահեցուց, թէ որեւէ պայմանաւորումութիւն պիտի ներառէ ապաշրջափակում, տարածքային ամբողջականութեան եւ ինքնիշխանութեան պահպանումը, իսկ Հայաստանէն անցնող բոլոր ճամբաները եւ ենթակառոյցները պիտի ըլլան հայկական ինքնիշխանութեան տակ եւ պիտի գործեն հայկական օրէնսդրութեան համաձայն: «Եթէ ճամբաներ կը բացուին Ատրպեյճանի համար, կը բացուին նաեւ Հայաստանի համար», ըսաւ Ռուբինեան:

Իսկ աներիկացի արտաքին գործերու նախարար Մարքօ Ռուպիօ յայտնեց, որ իրենք յոյս ունին խաղաղութիւն հաստատելու Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ: «Նախագահ Թրամփի հաւատարմի է խաղաղութեան եւ այդ ցոյց կու տայ զանազան հակամարտութիւններու մէջ աներիկեան միջամտութիւնները», ըսաւ Ռուպիօ:

Ամերիկացի ծերակուտական Սթիվ Տէյնս իր կարգին յայտնեց, որ հայ-ատրպեյճանական համագործակցութեան շնորհիւ Կեդրոնական Սփոյ քարիւղը, բնական կազմ եւ կենսակացօրէն կարելու հանքանիւթերու մատակարարումները այդ միջանցքով պիտի հասնին Եւրոպա եւ Արեւմուտք, շրջանցելով Ռուսիան ու Չինաստանը:

ՌՈՒՍԱԿԱՆ ԴԺԳՈՂՈՒԹԻՒՆ

Ռուսիոյ պետական տումայի երեսփոխան Կոնստանդին Ջաթուլին քննադատեց ամերիկեան միջնորդութեամբ բանակցութիւնները: Ան ահազանգեց, որ «Փաշինեանի միջոցաւ Թուրքիան Հայաստանի տարածքով ուղիղ ճանապարհ կը հարթէ դէպի Ատրպեյճան, Կասպից ծով եւ Կեդրոնական Ասիա, իսկ ՆԱՅՕ-ն եւ Միացեալ Նահանգները կ'օգտուին այդ դրութենէն»: Ռուսիոյ հայերու միութիւնը քննադատեց ամերիկեան միջնորդութեամբ Պաթուին հետ գործարք կնքելու երեւանի պատրաստակամութիւնը: Միութեան նախագահ Արա Աբրահամեան վարչապետ Նիկոլ Փաշինեանը ամբաստանեց Հայաստանը Թուրքիայէն եւ Ատրպեյճանէն կախուածութեան մէջ ձգելու յանցանքով, մինչ Պաթուի արտօժակը անընդհատ կ'ընդլայնուի: «Ի՞նչ կը բերէ այս խաղաղութիւնը Հայաստանին, արդեօք ատրպեյճանական ուժերը դուրս կու գա՞ն հայկական բռնագրաւել տարածքներէն եւ հայ գերիները կը վերադառնա՞ն հայրենիք», հարց տուաւ Աբրահամեան:

ԶԱՆԱԶԱՆՔ ԿԱՄ ՀԵՏԱՔՐՔՐՐՈՂԱՅ ՊԻՏԱՆԻ

Այսօր «Արարատ»էն ներս ուրախութեամբ կը հիւրընկալենք նոր յօդուածագիր մը՝ Սուրէն Տալեան անունով: Մեր սրտին խօսող կարծ, սակայն հետաքրքրական նշմար մը պիտի կարդաք ստորեւ: Յօդուածագիրը հետաքրքրութեամբ կը փափաքի իմանալ, թէ արդեօ՞ք իրեն նման «առածները կարդացող» քաղաքացիներ կա՞ն: Եւ անոր պատասխանը պիտի գտնէ գրութիւնը աւելի տպաւորիչ դարձնող մեր կողմէ զետեղուած լուսանկարով: Բարի գալուստ «Արարատ», յարգելի պրն. Տալեան:

«Ա.»

Վստահ եմ, որ Լիբանանի մէջ ամէն մարդ ինքնաշարժը վարած միջոցին հանդիպած է ու կը հանդիպի բեռնատար կամ փիք-ափի կամ մարդատար կամ մինի օթափսի, որոնց ետեւի կողմը գրուած կ'ըլլան հետաքրքրական գրութիւններ, մաղթանքներ կամ լիբանանեան առածներ, անշուշտ արաբերէնով: Սակայն ինծի համար հետաքրքրական է իմանալ, թէ քանի՞ հայ քաղաքացի կը նկատէ, կը կարդայ կամ կը մտածէ այդ գրութիւններուն մասին, այնքան ատեն որ զբաղած են բջջային հեռախօսով:

Ինչեւիցէ, պիտի ջանամ թարգմանաբար քանի մը օրինակներ բերել, գուցէ ընթերցողներս այսուհետեւ ուշադրութիւն կը դարձնեն այդ գրութիւններուն ու «կաթիլ մը գիտելիք» կ'աւելցնեն իրենց ընդհանուր զարգացման:

«Աստուած հետդ ըլլայ, Ապու Սամիր», «Խնդրեցէք Աստուծոյ եւ ծնողաց գոհունակութիւնը», «Հայրիկ, արագ մի՛ քշեր, մենք քեզ կը սպասենք», «Հանդարտ վարելը ապահովութիւն է, արագութիւնը՝ վտանգ», «Արագ մի՛ քշեր, մահը աւելի արագ է», «Մէրը երբեմն մահացու կ'ըլլայ», «Շատախօսներուն ներկայութեան հասկցայ լռութեան հաճոյքը», «Իշուն արժէք տուին, ինքզինք ձի կարծեց», «Ուշադիր եղիր որ շան մը



ծողը չի կրնար բանի մը տիրանալ», «Նախանձողին աչքը կը կուրնայ», «Ով Աստուած, աւելիով տուր իրենց այն ինչ՝ որ կը ցանկան ինծի համար, որպէսզի իրենց աչքը հեռացնեն ինձմէ», «Իմաստութիւնը քաղեցէք խենթերուն բերանէն»:



ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ 49

Ք	Ա	Ն	Ի	Ծ	Ա	Ն	Բ	Ը	Ն	Դ	Ո	Ծ	Ի	Ն	Ի	Ի	Ե	Ղ	Ե
Ց	Դ	Ր	Ը	Ն	Տ	Ա	Ն	Ի	Դ	Ն	Ի	Ո	Գ	Ա	Չ	Ա	Ր	Օ	Շ
Ա	Ր	Մ	Ո	Ն	Ի	Ք	Ա	Տ	Ր	Ա	Բ	Ա	Ն	Թ	Ո	Ղ	Ե	Ր	Գ
Ն	Ա	Ի	Ե	Ի	Ի	Բ	Ն	Ա	Կ	Ա	Ն	Դ	Տ	Ք	Դ	Ն	Ր	Ա	Բ
Գ	Կ	Ո	Ր	Ն	Ե	Վ	Ո	Թ	Ո	Թ	Ա	Ա	Ը	Ն	Ի	Ա	Կ	Հ	Ա
Ր	Ա	Տ	Ա	Դ	Ա	Ս	Տ	Ա	Կ	Ս	Հ	Ր	Ն	Ա	Տ	Ր	Ա	Ա	Ն
Ա	Ն	Չ	Գ	Ր	Ա	Ս	Տ	Ո	Տ	Ա	Ե	Ե	Թ	Ր	Ա	Ա	Ն	Ի	Տ
Ի	Ե	Ա	Ա	Դ	Ն	Ա	Ի	Ա	Կ	Ր	Ա	Կ	Ի	Կ	Կ	Տ	Ի	Ի	Դ
Թ	Ն	Է	Չ	Ա	Պ	Ա	Կ	Ա	Գ	Դ	Կ	Ն	Ր	Ր	Ր	Չ	Մ	Դ	Ա
Ն	Ռ	Ա	Ի	Ա	Գ	Ը	Ր	Ա	Ռ	Է	Ն	Ը	Ք	Ե	Չ	Ա	Ն	Ր	Ս
Ա	Բ	Ն	Շ	Ի	Ն	Ե	Ր	Ա	Բ	Ի	Տ	Ի	Կ	Բ	Տ	Ն	Ա	Ա	Տ
Կ	Ե	Ն	Ա	Տ	Շ	Ա	Ի	Ո	Թ	Թ	Թ	Ա	Ո	Ս	Ր	Գ	Կ	Ղ	Ի
Ա	Ր	Շ	Ա	Կ	Ն	Ե	Մ	Ա	Կ	Օ	Տ	Կ	Ա	Գ	Տ	Ա	Ա	Ե	Ա
Չ	Կ	Ն	Ա	Գ	Ա	Ն	Ա	Ր	Ն	Ս	Ո	Ր	Ո	Ի	Ա	Կ	Է	Գ	Ր
Ե	Ի	Ն	Ի	Ծ	Ա	Դ	Ն	Ը	Ա	Տ	Գ	Ի	Ո	Թ	Թ	Ր	Թ	Չ	Ա
Ք	Ր	Գ	Ա	Ր	Ո	Ի	Ն	Դ	Ն	Չ	Ը	Ն	Թ	Ա	Ց	Ք	Օ	Դ	Կ
Ս	Ա	Պ	Ր	Ա	Դ	Կ	Ա	Ա	Ի	Չ	Օ	Ր	Ա	Ի	Ո	Ր	Շ	Չ	Ա
Մ	Ի	Ո	Ց	Ա	Է	Ն	Ա	Ռ	Ի	Թ	Ց	Ո	Լ	Ե	Ե	Ա	Ն	Ա	Ս
Կ	Չ	Ա	Ն	Ց	Ա	Ռ	Ո	Ի	Ն	Ա	Կ	Ա	Չ	Ղ	Մ	Ր	Ի	Ն	Ի
Լ	Ե	Ս	Ա	Պ	Ր	Ա	Դ	Թ	Ե	Ր	Ա	Կ	Ղ	Չ	Ի	Ա	Լ	Բ	Գ

ԶԱՆԳԱԿ
ԶԱՆՏԱՌՈՒ
ԶԱՐՄԱՆԱԶԱՆ
ԶԱՐՕՇ
ԶՏԱՐԱՆ
ԶՏՈՒՄ
ԶՕՐԱԳՈՒՆԴ
ԶՕՐԱԴՈՐ
ԶՕՐԵՂ

ԸՂԶԱԿԱՆ
ԸՆԴԱԾԻՆ
ԸՆԴՈԾԻՆ
ԸՆԹԱՑՔ
ԸՆԹՐԻՔ
ԸՆԿԵՐ
ԸՆՏԱՆԻ
ԸՆՏԱՆԻՔ

ԹԵԶԱՆԻՔ
ԹԵՐԱԿԴԶԻ
ԹԵԱԿԱՆ
ԹՈՒ
ԹՈՒԼԱՇ
ԹՈԹՈԿ
ԹՕՆԸՆԿԵՑ
ԹՕՆՈՒՏ
ԹՕՇԵՒԼ

ԱՂԵԱԿ
ԱՆԱԳԱՆ
ԱՆԴԱՍՏԱԿ
ԱՆԷԱՑՈՒՄ
ԱՊԱԶԵՆ
ԱՌԻԹ
ԱՐԱՐՔ
ԱՐՈՒԷՍԱՍԳԵՏ
ԱՐՏԱՔԻՆ
ԱԲԱՆԴ
ԱԲԱՆԴԱԿԱՆ
ԲԱՆԹՈՂ

ԲԱՆՏ
ԲԱՐԵՆԻՇ
ԲԵՐԿՐԱՆՔ
ԲԶԶԻՒՆ
ԲՆԱԳԱԲԱՌ
ԲՆԱԶԴ
ԲՆԱԾԻՆ
ԲՆԱԿԱՆ
ԲՈԿՈՏՆ
ԳԱՐՈՒՆ
ԳԱԲԱՌ
ԳԵՂԱՐԴ

ԳԻՍԱԿ
ԳՆԱՑՔ
ԳՈՒՆԴ
ԳՐԱՍՏ
ԳՐԱՍՏԱՍԻՏ
ԳՐԱԻ
ԴԱՍՏԱԿ
ԴԱՍՏԱԿԵՐՏ
ԴԱՍՏԻԱՐԱԿ
ԴԱՐՊԱՍ
ԴԱՐՊԱՍԵԼ
ԴԻՏԱԿ

ԴԻՐԱՅԱՐ
ԴՐԱԿԱՆ

ԵԶԱԿԱՆ
ԵԼՈՅԹ
ԵՂԵԻՆ
ԵՄԱԿ
ԵՐԱԳԱԶ
ԵՐԱԿԱՅԱՏ
ԵՐԳԱՐԱՆ
ԵՐԿԱՆ
ԵՐԿԻՐ

- ԽԱԴԻՆ ՕՐԵՆՔԸ.**
- Բառերը կրնան կարդացուիլ տարբեր ուղղութեամբ՝ հորիզոնական, ուղղահայեաց եւ շեղակի:
 - Միեւնոյն տառը կրնայ գործածուիլ մէկէ աւելի բառերու մէջ:
 - Դիւրութեան համար սկսիլ երկար բառերը գտնելով:

Պահուած բառը (7 տառով)՝ ԺԱՆՏԱՅՈՏ ԿԵՆԴԱՆԻ

ՊԱՀՈՒԱԾ ԲԱՌ ԹԻԻ 48-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՍՈՎԱԼԼՈՒԿ

Պահուած բառին եւ խաչբառին պատասխանները տեսնել խաղերու յաջորդ թիւով

ԿՈՉ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ո՛վ ազատութիւն, լսէ,
Հասիր՝ մեզի օգնութեան
Ու փրկէ մեզ, ազատէ
Անիրաւուած այս կեանքէն
Թափառակոծ շիջումէն:

Եւ սակայն նախ, որպէսզի
Ըլլանք քեզի արժանի,
Ախտերէն մեր մեզ մաքրէ.
Ատելութեան, նախանձի
Եւ ցանկութեան սին փառքի.
Ոխն ու մոլուցքը յամառ
Համէ մեր մէջէն իսպառ:

Որպէսզի մենք համերաշխ,
Երկնի տակ այս լուսաբաշխ,
Ապրինք առանց նախանձի,
Այլ ցանկութեամբ բարիքի:

Ազատութիւն, այն ատեն
Եղիր դուն մեր այցելուն,
Եւ վրէժով տոգորուն
Ոսոխին դէմ անօրէն,
Բազուկները մեր զինէ,
Որ դատն արդար մեր վանէ
Վոհմակները թշնամի
Աշխարհէն մեր հայրենի:

ԵՐՈՒՄԱՆԴ ԳԱՐԱԾԵԱՆ
(ԲԱԶԷ)

28/06/1984

ԽԱՉԲԱՌ 48

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ

- 1) ճգնաժամային, անդոհական
- 2) Լուսաբաց - Լեզուով մը՝ այո՛ – Մաշտոցի ստեղծած՝ աղուանական այբուբենի 16-րդ տառը
- 3) Իրերայաջորդ գիրեր – Խմբավարի գաւազան – Կրկնուած բաղաձայններ
- 4) Երկնային լուսաւոր մարմին
- 5) Պաշարի մթերանոց – Ծայրերը կտրուած՝ ֆրանսերէն Փղոսկրեայ ափունքին երկրորդ բառը
- 6) Դէմքի հակառակ ուղղութեամբ – ճռճան միջատ
- 7) Ընդունակ, կարող (հակ.)
- 8) Այբուբենէն – Խոզի ծագ – Ստացական ածական
- 9) Ապաժամ – Տառի մը անունը – Համեմը շատ
- 10) Կուսակալ

ՈՒՂԱՅԱՅԵԱՏ

- 1) Բնականոն վիճակէ տարբեր
- 2) Յաճախանք – Կրկին – Իգական օտար անուն
- 3) Կրկնուած բաղաձայններ – Մանչուկ – 570
- 4) Երէք, զխաւոր
- 5) Վահան – Չուան, պարան
- 6) Համանուն պապեր – Ետին դարձած՝ թզուկ
- 7) Փոթոթահամ, պորոմիչ
- 8) Լեցուն – Մեծածախս (հակ.) – Ժխտական մասնիկ
- 9) Միաւոր թիւ – Շաղկապ – Կաթնահամ հատիկներով ցորենի հասկ (հակ.)
- 10) Պակասամիտ, խելքը կորսնցուցած

ԽԱՉԲԱՌ ԹԻԻ 47-ԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Յ	Ե	Տ	Ն	Ա	Գ	Ո	Ի	Ն	Է
2	Ո	Ս	Տ		Ն	Ն		Ո	Ի	Տ
3	Ր	Ի		Ր	Տ	Ե	Տ		Ե	Ս
4	Դ		Հ		Ո	Լ	Ո	Ք		Ո
5	Ո	Լ	Ո	Ռ	Ն		Ի	Ի	Ռ	Կ
6	Ր	Ե	Ս	Ա		Ա	Ն	Ե	Լ	Ե
7	Ա		Է	Մ	Ի	Ր		Ի		Տ
8	Կ	Ի		Ա	Լ	Ի	Ք		Ո	Ն
9	Ա	Ն	Ա		Ա	Մ		Ս	Ի	Ե
10	Ն	Ա	Խ	Ա	Պ	Ա	Ր	Ի	Ս	Պ

ՈՒԽՏԻ ՕՐ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾՈՒՆ ՎԱՆՔԻ ԵՒ ՏՕՆ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾՈՒՆԻ

Հոգեկան գոհունակությամբ այսու կու գանք մեր ժողովուրդի զաւակներուն յայտնելու, որ Ս. Աստուածածին վանքի Ուխտի Ս. Պատարագը պիտի մատուցուի Շաբաթ, 16 Օգոստոս 2025-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Պիքֆայի Ս. Աստուածածին վանքի համալիրէն ներս:

Ուխտի Ս. Պատարագին պիտի նախագահէ, մատաղօրհներէ կատարէ եւ Հայրապետական իր պատգամը փոխանցէ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՆ

պիտի պատարագէ
Գերշ. Տ. Տաճատ Եպս. Աշըգեան
Դիւանապետ Կաթողիկոսարանի

ԾԱՆՕԹ.

- Փոխադրականքեր տրամադրուած պիտի ըլլան ժամը 5:30-ին հետեւեալ վայրերէն.
- * Անթիլիասի Մայրավանք
 - * Զաւթա (Թիքօ Թիքօ)
 - * Ս. Աստուածածին եկեղեցի
 - * Խալիլ Պատուի եւ Հաճըն (Օլիմփիք)
 - * Ս. Վարդանանց եկեղեցի
 - * Ս. Ազնէ վարժարան
 - * Ազգային Ծերանոց
 - * Ս. Յովհաննու Կարապետ եկեղեցի
 - * Ս. Երորդդուն մատուռ (Ֆանար)
 - * Ս. Ներսէս Շնորհալի մատուռ (Ռաուտա)
 - * Ս. Յակոբ եկեղեցի (Էշրէֆիէ)

ԿԻՐԱԿԻ, 17 ՕԳՈՍՏՈՍ 2025

Ս. Աստուածածնի վերափոխման տօնին առիթով, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ պիտի մատուցուի Ս. եւ Աննահ Պատարագ եւ կատարուի խաղողօրհներ:


Պիտի պատարագէ ու քարոզէ
Գերշ. Տ. Մեսրոպ Արք. Սարգիսեան
Առաջնորդ Արաբական Սիւսեալ Էմիրութիւններու, Քաթարի եւ շրջակայից հայոց թեմի

**ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2025
(ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՑ)**

Պիքֆայայի Ս. Աստուածածին մատարան մէջ պիտի մատուցուի Ս. եւ Աննահ Պատարագ, որուն աւարտին տեղի պիտի ունենայ հոգեհանգստեան կարգ՝ ազգիս համօրէն ննջեցելոց հոգիներուն ի հանգիստ:

ԴԻԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԵՂԱՆԱԿԸ ԱՅՍՕՐ



Պէյրուս (արեւոտ)
Ցերեկը 32/28՝ գիշերը՝ 72% տամուկ

Երեւան (արեւոտ)
Ցերեկը 34/22՝ գիշերը՝ 25% տամուկ

Հալեպ (արեւոտ)
Ցերեկը 44/29՝ գիշերը՝ 18% տամուկ

Դամասկոս (արեւոտ)
Ցերեկը 42/27՝ գիշերը՝ 15% տամուկ

Տուպայ (արեւոտ)
Ցերեկը 39/34՝ գիշերը՝ 40% տամուկ

Լոս Անճելլոս (արեւոտ)
Ցերեկը 31/19՝ գիշերը՝ 46% տամուկ

Սիտնի – վաղը (թեթեւ անձրեւ)
Ցերեկը 16/11՝ գիշերը՝ 76% տամուկ

Մոնթեպիլիտո – վաղը (արեւոտ)
Ցերեկը 13/6՝ գիշերը՝ 76% տամուկ

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: aradoratert@gmail.com

ارارات جريدة سياسية يومية أجنبية
تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (م.م.)

ՇՆՈՐԸԱԽՈՐԱՆԷ

Հ.Մ.Մ.-ի Սկսուտական խորհուրդը եւ հմբապետական կազմը ջերմօրէն կը շնորհաւորեն Հ.Մ.Մ.-ի արեւուշական շարժումի փոխհմբապետուհի Մելանի Տօվլէթեանը եւ Հ.Մ.Մ.-ի փողերախումբի անդամուհի Էլէն Յակոբեանը՝ Լիբանանի պետական պաթալորիայի քննութեան մէջ իրենց յաջողութեան առիթով:



**Մելանի
Տօվլէթեան**



**Էլէն
Յակոբեան**



Ազունիէի Հայ Ազգային Բուժարան

Ազունիէի Հայ Ազգային Բուժարանին եղած են հետեւեալ նուիրատուութիւնները Յուլիս ամսուայ ընթացքին:

- | | |
|---|-------------|
| - Սան Ֆրանսիսքոյի հայ տիկիներ | 2,500\$ |
| - Խումբ մը հայ տիկիներ Լոս Անճելոսէն իբր օրուայ ճաշ | |
| Տիկ. Սոնա Սարաֆեան | 100\$ |
| Տիկ. Սօսի Դազարեան | 50\$ |
| Տիկ. Լուսիա Սէֆերեան | 50\$ |
| Տիկ. Եսթր Գարախանեան | 50\$ |
| Տիկ. Աստղիկ Հարապեան | 100\$ |
| - Դանիէեան ընտանիք | 100\$ |
| - Տիկ. Նազելի Մարտիրոսեան-Սլիմ (Տուպայէն) | 525\$ |
| Պատասխարեալի ամսուայ հոգատարութիւն | |
| - Պրմ. Եսայի Հաւաթեան | |
| 1 անգամ պտղատու ծառերու անվճար սրկում | |
| - Տիկ. Մարիա Աճմեան | Օրուայ ճաշ |
| Հօր՝ Սահակ Աճմեանի յիշատակին | |
| - Օրդ. Մարիա Պողոյեան | |
| 1 արդիական ելեկտրական հիւանդանոցի անկողին | |
| 1 անհաւոր կառք հաշմանդամի համար | |
| | 1 Հեռատեսիլ |

Կանխայայտ շնորհակալութիւն

**ԽՆԱՄԱԿԱԼՈՒՔԻՆ ԵՒ ՏՏՕՐԵՆՈՒՔԻՆ
Ազունիէի Հայ Ազգային Բուժարանի**

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՅՍՕՐ

9 Օգոստոս 2025: Տարուան 221-րդ օրն է:
2025-ի աւարտին կը մնայ 144 օր:

Դէպքեր-տօներ

1830 – Յուլիսեան Յեղափոխութենէն ետք Լուի Ֆիլիպ Ֆրանսայի թագաւոր հռչակուեցաւ: Ան գահ բարձրացաւ Շարլ 10-րդին տապալումէն ետք եւ իշխեց մինչեւ 1848:
1945 – Ամերիկեան ռմբակոծիչ մը **աթոմական** երկրորդ ռումբը նետեց ճափոնի **Նակասաքի** քաղաքին վրայ, որուն հետեւանքով զոհուեցաւ շուրջ 74.000 մարդ:
1965 – **Սինկափուր** դուրս եկաւ Մալեզիոյ կազմէն: Լի Քուան Եուի զլխաւորած կառավարութիւնը ընդունեց անոր անկախութիւնը, որմէ ետք Սինկափուր ուղղուեցաւ անբողջովին ինքնուրոյն քաղաքա-տնտեսական ուղիով:
1974 – **Ուոքըրլէյթի** գայթակղութենէն ետք ԱՄՆ-ի նախագահ **Ռիչըրտ Նիքսըն** հրաժարեցաւ նախագահի պաշտօնէն:

Ծնունդներ

1932 - Վարդգէս Համազասպի **Պետրոսեան** (1932-1994), արծակագիր, թատերագիր, հրապարակախօս եւ հասարակական գործիչ:
1925 – **Յակոբ Կարապետեան** (1925-1994), ամերիկահայ նշանաւոր արծակագիր:
1965 – **Մասիս Յովհաննէ-Շիրազի Կարապետեան**, քանդակագործ եւ նկարիչ: Մեծանուն բանաստեղծ Յովհաննէ Շիրազի որդին եւ քանդակագործ Արա Շիրազի եղբայրը:
1963 – **Ուիթնի Էլիզապեթ Հիւսթըն** (1963–2012), ամերիկացի երգչուհի, դերասանուհի:
1968 – **Արթուր Ռոպերթի Սարգսեան** (1968-2017), յայտնի էր որպէս «Հաց Բերողը»: Մասնակցած է Արցախի ազատամարտին, եւ սնունդ հասցուցած է «Սասնա ծռեր» զինուած խումբի անդամներուն:



Մահեր

1919 – **Էնըստ Զեկել**, գերմանացի բնագետ: Մեծ ազդեցութիւն ունեցաւ տարուինեան գաղափարներով եւ ուսումնասիրեց կենդանիներու սաղմնային զարգացումը, բացատրելով բազմաբջիջներու ծագումը, հիմք դնելով կենդանիներու ծագման պատմութեան հետազոտութեան:
1975 – **Տմիթրի Շոսթաքովիչ**, լեհական ծագումով ռուս երգահան, 20-րդ դարու մեծագոյն երաժիշտներէն մէկը:

World Guitar Competition NOW in Beirut

Under the Auspices of World Guitar Organization
and International Institutions of High Prestige



Guitar Olympiad 2025

MEGERDICH MIKAYELIAN as the Ambassador of the Guitar Olympiad in Lebanon & Armenia

is pleased to host

GUJAR OLYMPIAD

The event will be held
on the 30th of August 2025
at 11:00 am

in KOHAR GALLERY
1st Floor, Bank of Beirut Bldg.
243 Armenia Street
Mar Mikhael, Beirut



*For further information
contact +961 3 544703



KOHAR
GALLERY

1st Floor, Bank of Beirut Bldg.
243 Armenia Street
Mar Mikhael
Beirut